

ՄԱՅՐ ԱԹՈՌԸ ԻՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԻՆ ՄԵՋ*

«Արարատ»-ի 21 մարտ թվակիր համարին ներ, լույս ընծայած էինք պատճենը Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմե Հորդանանի Վեհապետին և Լիբանանի, Սուրիո և Իրաքի նախագահներուն ղրկված կոնդակին:

Բացառիկ կարևորություն ներկայացնող, խորապես հատկանշական և օգտակար նախաձեռնություն մըն է որ առած է Վազգեն Ա Հայրապետ: Զայն կնկատենք հույժ ողջունելի ձեռնարկ: Բարձրագույն գնահատանքի արժանի եղելություն: Եվ ոչ մեկ տարակույս որ տեղին, անհրաժեշտ, խոհեմ այլ իմաստուն դատողութենե մը մղվելով է, որ նման քայլ մը առած է Մայր Աթոռի Գահակալը: Զգացնելով ամենուրեք, թե Նորին Սրբությունը ինչպիսի խոր ու մնայուն հոգածություն կտածե սփյուռքի իր հոտին նկատմամբ: Ան խիստ ուշադիր և զգայուն է մեր առօրյային,

* Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մշտարթուն հայացքով հետևում է հայ ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքին: Նորին Սրբության մշտական ուշադրության կենտրոնում են հայ ժողովրդի պատմական անցյալն ու ներկան, և յուրաքանչյուր քիչ թե շատ ուշագրավ դեպք կամ դեմք անպայմանորեն արժանանում է Վեհափառ Հայրապետի ուշադրության և անհրաժեշտ գնահատականը գտնում հայրապետական կոնդակների և օրհնության գրերի մեջ:

Բարեբախտաբար սփյուռքի մամուլի գրեթե բոլոր միջոցները ժամանակին արձագանքում են Վեհափառ Հայրապետի ձայնին՝ տպելով ու տարածելով նրա խոսքը: Երբեմն նաև մեկնողական հոդվածներով անդրադառնում են Վեհափառի խոսքի էությունը կազմող գաղափարներին: Այդպիսի գովելի աշխատանք է կատարել Բեյրութի «Արարատ» օրաթերթը, որը 1985 թ. մարտի 24-ի համարում առանձին հոդվածով անդրադարձել է Վեհափառ Հայրապետի կոչին՝ Սիրիայի, Լիբանանի, Իրաքի և Հորդանանի նախագահներին՝ դյուրացնելու իրենց երկրներում Ապրիլյան եղեռնի 70-ամյակի ոգեկոչումը, իսկ ապրիլ 19-ի համարում՝ Վեհափառի խաղաղասիրական գործունեությանը, որտեղ հատկապես ասվում է. «Ինչ որ իբրև մաղթանք, իղձ ու տենչ կբարձրանա Ամենայն Հայոց կաթողիկոսի սրտեն, կընդգրկե ոչ միայն հայ տառապյալն ու իր մոխիրեն հառնած ժողովուրդը, այլև բովանդակ մարդկությունն իսկ: Միայն պատերազմ, կոտորած, կոհ ու կրկանք ապրած ու տեսած ժողովուրդները կրնան իսկապես գնահատել խաղաղության ու ապահովության արժեքը»: «Հյուսեական պատերազմի սարսափազդու հավանականությունը բողոք ու ընդվզում կհառաջացնե: ...Խաղաղասեր մարդկությունը կծառանա, կբարձրացնե իր ձայնը ահագնացող ցասումով: Կպահանջե վինարշավի դադարեցում, վինաթափություն, որոշ վենքերու արգելում»:

«Խաղաղատենչ ժողովուրդներու առաջին շարքին կգտնվի նաև հայությունը: ...Խաղաղություն հայության, իր Մայր Հայրենիքին, հայուն որդեգիր հայրենիքներուն: Խաղաղություն աշխարհին, մարդկության:

Այս մտատանջության, մեկի և ուրիշներուն համար եղեռններ կանխելու, ուրիշներու անգութ ոչնչացումին մեջ շահ, վայելք ու գոհացում ստացողները սանձելու աղերս ու պահանջ են Վազգեն Ա Հայրապետի կրկնվող դիմումները՝ վասն խաղաղության պաշտպանության»:

Խմբագրությունը նկատի ունենալով, որ հատկապես մարտի 24-ի համարում «Մայր Աթոռը իր պատմական դերին մեջ» վերնագրված հոդվածը կհետաքրքրի մեր ընթերցողներին, այն տպում է ամբողջությամբ:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

հոգերուն և դեռ ամեն ինչի հանդեպ, որ հայկական արտասահմանի ապահովության և բարեկեցության հետ կառնչվի: Ս. Էջմիածինը իր մատներուն ներքև ունի հայ-սփյուռքին բակերակը: Իր հոգատար թևերը կպահե տարածուն անոր վրա: Ոչ միայն ջահակիրն է հայու ոգեկանության, կմնա ժառանգորդը անցյալեն իրեն կտակված արժեքներուն, այլև ներշնչող է ապագային ավանդ կավմող սրբազնագույն տենչերուն: Կշարունակե մնալ, մանավանդ, կգաստ և ողջամիտ ուղեցույց մը հայ-երթին, պայն դեպի բախտավոր վաղորդայններու տանող:

Վազգեն Ա Հայրապետին դիմումը իմաստալից է և բազմախորհուրդ: Ան առիթ կընծայե մեզի որ ընենք հաճելի հաստատում մը —հակառակ տարակույս չունենալնուս— որ Մայր Աթոռը ավելի քան երբեք, կպահե ազգային-եկեղեցական ղեկավարի իր դերը, կմնա ամուր և հետևողական իր առաքելության մեջ, անոր հավատարիմ:

Հայ Եկեղեցին կհովանավորե, իր հերթին, Մեծ եղեռնի 70-ամյակի մեծաշուք ոգեկոչումները, որոնք պիտի կատարվին Մայր Հայրենիքի մեջ և սփյուռքի բովանդակ տարածքին: Երկու միլիոն հայ նահատակներու հուշածումը պիտի առիթ ծառայե դատապարտելու դարուս Ա ցեղասպանությունը: Անով արդարություն պիտի պահանջվի անպատիժ մնացած ոճիրին ու հայրենապրկության համար, որուն ենթարկվեցավ հայությունը: Պիտի մաղթվի որ այս կարգի ողբերգություն չգործվի այլևս աշխարհի վրա ոչ մեկ տեղ: Բոլոր ժողովուրդները իրարու հետ ապրին խաղաղ ու համերաշխ: Արդար հատուցում կատարվի ամեն կարգի անիրավությանց վոհերուն:

Մեծ եղեռնի շուրջ երկու միլիոն նահատակներու ոգեկոչման 70-ամյակը պատեհ առիթ նկատված է Նորին Սրբության կողմե հայտնելու, որ հայությունը երախտամոռ և ապերախտ չէ: Ան հավերժ երախտագետ է և շնորհակալ Միջին Արևելքի տերությանց, հատկապես Սուրիո, Լիբանանի և Իրաքի իշխանություններուն և ասոնց ժողովուրդներուն որոնք, մղված իրավ մարդասիրութենե որուն ակնաղբյուր կկազմեն իսլամ և քրիստոնյա կրոններու վեհ սկզբունքները, բարի սամարացիի դեր կատարեցին թուրք արյունարբու ազգայնամոլության հայ վոհերուն հանդեպ: Իրենց աղն ու հացը կիսեցին թրքական ցեղասպանութենեն մազապուրծ փրկված մեր մնացորդին հետ: Ինչքան որ կթույլատրեին ընել անշուշտ իրենց միջոցները: Չէ՞ որ շրջանի ժողովուրդները, իսլամ թե քրիստոնյա դավանության հարող, նվազ չեն տառապած սուլթանական թե իթթիհատական լուծերու ներքև: Տված են անթիվ վոհեր այս գորշ ու վայրելի բռնակալության, որ պակաս անխիղճ ու գազանաբարո չէ գտնված իսլամ ազգաբնակչությանց նկատմամբ: Կրոն և բարոյական վսեմ ըսկզբունքներ միշտ շպար եղան այս խավարածին իշխանության համար իր տիրելու, կողոպտելու և ուրիշի աշխատանքին վաստակով սնվելու բնազդը քողարկող:

Եղեռնեն 70-ամյակ մը ետք, այսօր, հայությունը ունի իր Մայր Պետությունը: Այն վերակերտված է հայուն պատմական հողերուն մեկ փոքր կտորին վրա որուն չկրցավ հասնիլ թուրք բռնագրավիչին ճիրանները: Այնտեղ, հայության մեծ վանգվածը կապրի խաղաղ ու ապահով պայմաններու մեջ, շնորհիվ եղբայրական համակեցության մը, որ խորհրդային ժողովուրդներու փոխհարաբերությունը կբնորոշե: Կմնա ցուցանիշ իրենց հզորության: Վերածնած Հայկական Պետությունը, Եկեղեցին, հայրենաբնակ հայությունը չէին կրնար մոռնալ անշուշտ իրենց կիսված սրտին մեկ կտորը կազմող արտերկրի իրենց եղբայրները և քույրերը: Հոգեկան-զգացական սերտ կապ մը պիրենք անոնց կմիացնե մշտապես: Այս մեկը կարելի կդառնա շնորհիվ այն հոգեկցության, լայնախոհ ու հանդուրժող վերաբերումին որոնց ենթակա է հայ-սփյուռքը իր գտնված երկիրներու և հատկապես Լիբանանի, Սուրիո և սահմանակից երկիրներու բարեխնամ իշխանությանց և ազնվահոգի բնիկներու կողմե: Ասոնք ոչ միայն երդիկ ու հաց տվին թրքական ջարդերեն ճողոպրած հայերուն, այլև շնորհեցին հպատակություն անոնց, նկատեցին զանոնք որդեգիր, եղբայր ու բախտակից: Եվ իրենց մարդասեր ու բարեխիղճ վերաբերումը իր ծայրակետին հասցնելով գտան բնական, որ ծնունդով հայ իրենց քաղաքացիները շարունակեն կապված մնալ իրենց արենակիցներու հետ, ներշնչվին իրենց բնօրրանի հնավանդ արժեքներեն և սրբություններեն:

Ի տես այս հուզիչ իրողության, Ամենայն Հայոց կաթողիկոսը հանուն իր և «վերապրող վավակներուն» կհայտնե «խորագգաց շնորհակալություն» հատկապես արաբ ժողովուրդին և իր ղեկավարներուն: Բարձրորեն կգնահատե այն հանգամանքը, որ անոնք, եղբայրական ու հարազատի վերաբերում ցուցաբերած են և կշարունակեն վկայել իրենց հայ հպատակներուն և դրկիցներուն հանդեպ: Միաժամանակ Վեհափառը կհավաստիացնե անոնց, որ սփյուռքահայության կառչումը իր Մայր հողին բնավ վինք պարտավանց և ապերախտ չէ ձգած ու երբեք ալ պիտի չթողու որդեգիր հայրենիքին նկատմամբ իր ունեցած պարտականությունները բարեխղճորեն կատարելու

մեջ:

Արդարև փաստ է, որ Միջին Արևելքի հայկական գաղութներե ներս թե այլուր, հայությունը, հոգեպես հաղորդ մնալով հանդերձ իր Մայր հողին, եղած է ու կմնա հավատարիմ, երախտագետ ու օրինապահ քաղաքացի իր ապրած երկրին: Ծանրակշիռ նպաստը բերած է ու կներդնե երկրորդ հայրենիքներու վերելքին: Կպահե սերտ հոգեկցություն անոնց բնիկ ժողովուրդներու ազգային ու ընկերային տենչերուն հետ: Իր քրտինքի և արյունի տուրքով ալ կաջակցին «արաբ ազգի բոլոր իդեալների» իրականացման: Ըլլալով քաջ համոզված, որ արաբ ազգի թշնամին չի կրնար հայության բարեկամ նկատվիլ: Ինչպես որ օրին, դեռ մինչև այսօր ալ, հայ ազգի թշնամիները չեղան ու պիտի չըլլան բարեկամ արաբ-իսլամ թե քրիստոնյա ժողովուրդներուն: Բոլոր ժողովուրդները, խորքի մեջ, իրարու բախտակիցներ են: Տանջված, անարդարության զոհ և ազատաբաղձ ու պահանջատեր բոլոր ժողովուրդները մանավանդ: Ասոնք ունին հասարակաց թշնամի մը—բռնատիրությունն է ան, ցեղային գերադասության ոգին, ազգայնամոլությունը: Ահա թե ինչու ազգային հիմնական շահերու ընդհանրության գաղափարը մղած է մեզ որ նեցուկ ըլլանք եղբայր ժողովուրդներու արդար ու բնական ոգորումներուն: Ունենալով այն արդարացի ակնկալությունը որ նույն այդ ժողովուրդները կամ լավագույն կավակները անոնց, չեն վարանիր իրենց եղբայրական ձեռքը մեկնելու մեզի ի պաշտպանություն Հայ Դատին: Մեծ եղեռնի նահատակներու 70-ամյակի ոգեկոչման սա օրերուն մանավանդ: Ուժավորել Հայ Դատը, պիտի նշանակե, անոնց համար, ծառայած ըլլալ ժողովրդական ու ազգային բոլոր դատերուն և փոխադարձաբար:

Անկասկած, որ Ամենայն Հայոց կաթողիկոսի սույն պատգամը խոր ու նպաստավոր արձագանք կգտնե արաբ պետական դեմքերու և հանրային կարծիքի մոտ: Ան կնպաստե հայ-արաբ բարեկամական կապերու սերտացումին: Հատկապես երբ այդ եղելության իրավեկ կդարձվին ժողովրդային լայն խավերը: Եվ բարեկամական ու եղբայրական այս հարաբերություններու ամրապընդումը կունենա բարերար ներգործություն Միջին Արևելքի հայկական գաղութներու ապահովության վրա: Ավելին՝ կդառնա նըպաստ որքան հայկական դատին, նույնքան ալ արաբ եղբայր ժողովուրդի դատին: Անոնք, այս զույգ ազգային դատերը տարբեր տարավներ կկրեն թեպետ, սակայն զոհեր են նույն անարդարության: Չեն տարբերվիր իրարմե իրենց **բնույթով:**

Մայր Աթոռին սույն նախաձեռնությունը, աննախընթաց և օգտաշատ, կգոտեպնդե հայ-սփյուռքը, կուժավորե Հայ Դատը, կամրապնդե հայության միասնությունը: Դառնալով ակնբախ վկայություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և իր Գահակալի միջազգային հեղինակության աննախադեպ զորացումին հետ, իր պատմական դերի կարևորության, որ դեռ այս աստիճան ծանրակշիռ ու արդյունավետ չէր եղած միջազգային թատերաբեմի վրա: